

# ՉՈՒԱՐԹ ՊԱՏՈՒՄՆԵՐ՝ ԸՆԿԵՐՈՋՍ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

*Posted on February 10, 2023 by Keghart*



Category: [Opinions](#)



## Սովսե Ծիրանի, Մոսթրեալ, Դեկտեմբեր 2022

### Տիգրան Թումանյան

Տիգրան ջան՝

Ես այն մարդը չեմ եւ ոչ ալ դուն այն ընկերն ես, որուն մահուան առիթով տխուր եւ յուզիչ խօսքեր արձանագրեմ...: Հետեւաբար թոյլ տուր որ մեր ուսանողական կեանքէն որոշ դրուագներ պատմեմ, որոնց ընթացքին կը բացայայտուի նաեւ քու Պոլսահայ ազնիւ մարդու, ջինջ հայու եւ հաւատարիմ ընկերոջ ուսանելի կերպարը...: (🙏)

Ուրեմն.

Երեւանի Պետ. Համալսարան, 1971, Հոկտ.

Սիրելի ընթերցող՝

Ընկերներով Սարգիսի (Խաչատուրեան), Մինասի (Գոճայեան), Յակոբի (Չուլաքեան), Լեւոնի (Չուքասզեան), Վահանի (Սեթեան), Կարպիսի (Գույումճեան) եւ ուրիշներու հետ նստած էինք Համալսարանի հին շէնքի ուսանողական ճաշարանը, ու կը սրճէինք: Յանկարծ Տիգրանը, որ տարի մը առաջ Ամերիկայէն եկած էր Հայաստան՝ համալսարանի հայագիտական բաժինը ուսանելու, անակնկալօրէն ներս մտաւ եւ տեղեկացուց, որ ռուս ուսուցչուհին մեզ կը սպասէ...: Սարգիսը ըսաւ.

--Տիգրան, որոշած ենք այսօր ռուսերէնի դասին չմտնել, ներս եկուր:

--Չ'ըլլար Շիշկօ (\*\*), ես դասի պէտք է երթամ, ուսուցչուհին կը սպասէ, ամօ՛թ է...:

Սկսան վիճիլ, Տիգրանը կ'ուզէր երթալ, իսկ Սարգիսը կը պնդէր որ մնայ, որուն հետ միւսները եւս համաձայն կը թուէին ըլլալ: Ես միջամտեցի.

--Սարգի'ս, ձգէ որ երթայ, ինչո՞ւ կը պարտադրես... :

-- Դուն դեռ նոր ես, չես ճանչնար զինք, այս «խիար»ը հիմա պիտի երթայ եւ ռուս կնոջը պիտի ըսէ որ տղաքը «պուճետ»ը նստած սուրճ կը խմեն:

Տիգրանը թէեւ տակաւին «խիար»ի իմաստը չէր գիտեր, այնուամենայնիւ վրդովուած՝ պատասխանեց.

-- Հապա ի՞նչ պիտի ընեմ, սո՞ւտ պիտի խօսիմ... :

Եւ իսկապէս Տիգրանը ո՛չ սուտ խօսիլ գիտեր եւ ոչ ալ կեղծել, ազնիւ ու վեհանձն մարդու մարմնաւորումն էր...

Հիւրանոց Երեւան, 1972, Յունուար

Տիգրանին հօրեղբայրը («Հաբաբըր»)՝ արմատներով պոլսահայ Միհրան Թումանյան,

քանի մը տարի առաջ ԱՄՆ-էն ներգաղթած էր հայրենիք, ու կը շարունակէր իր հաւաքած ու գրի առած երգերը դասակարգել ու նօթագրել, պատրաստելու համար ակադեմական հրատրակման: Իրեն տրամադրուած էր Երեւան հիւրանոցի Չարենցիս ապրած սենեակը, որուն համար հպարտ էր: Գերազանցապէս զարգացած մարդ էր Միհրան Թումաճան, որուն քով պարբերաբար կը հանդիպէինք...: Ան Կոմիտասի նշանաւոր հինգ աշակերտներէն մէկն էր, մօտիկ ընկերը Բարսեղ Կանաչեանի եւ միւսներուն: Մեզի համար մշակութային գետնի վրայ «գանձ» մըն էր ինք, տեղեկութեաններու շտեմարան մը, որովհետեւ անձամբ տեսած ու ճանչցած էր պոլսահայ բազմաթիւ գրողներ եւ մշակոյթի կերտիչներ, ինչպէս՝ Արմենակ Շահմուրատեան, Էտ. Յովհաննիսեան, Վահրամ Փափագեան, Հրաչեա Ներսիսեան, Հրաչեա Աճառեան եւ այլ բազմաթիւ անձնաւորութիւններ, որոնց մասին հետաքրքրական գրոյցներ կ'ունենայինք իր հետ:



### **Տիգրանը իր հօրեղբօր՝ Միհրան Թումաճանի հետ**

Մենք՝ Տիգրանի ուսանող ընկերները, կը յարգէինք զինք ու պարբերաբար կը հանդիպէինք իրեն: Այդ օր նոյն ընկերներով զացած էինք անոր Նոր Տարին եւ Ս. Ծնունդը շնորհաւորելու: Ընթացքին Թումաճանի թելադրանքով Տիգրանը Պոլսէն դրկուած մեծդի կողով մը անուշեղէն մէջտեղ հանեց ու սկսաւ հիւրասիրել մեզ: Երբ Սարգիսին հասաւ հերթը, ան բողոքեց.

--Ի՞նչ է աշակերտի պէս մէկ մէկ կը բաժնես, սեղանին դիր որ շնորհքով ուտենք:

~~Տիգրանը անուշեղենի տուփը Սարգիսին դիմաց դնել էտք, դարձաւ դէպի հորեղբայրը  
եւ ըսաւ.~~

--«Հաբաբըր», *Շիշկոն* որկրամուլ է, եթէ իրեն ըսես շատ մի՛ ճաշակեր, կը սրդողի...:

Կանխելու համար Սարգիսին զայրոյթը, ըսի.

--Տիգրան, «փաքլաւային» հայերէն ի՞նչ կ'ըսեն... գիտե՞ս:

--Նայի՛ր, Մոզըս, «փաքլաւային» թերթանուշ կ'ըսեն, իսկ եթէ կ'ուզես գիտնալ  
«գատայէֆին» ի՞նչ կ'ըսեն, անոր ալ թելանուշ կ'ըսեն:

Այսպէս էր Տիգրանը, հայերէնը բառարանէն կը սորվէր: Ան «որկրամուլ»ի եւ «սրդողիլ»ի  
նման բազմաթիւ բառեր կը գործածէր: Օրինակի համար հորեղբօրը ձեռքի գաւազանին  
«անթացուպ» կ'ըսէր, եւ կամ թոյլ ու հիւանդկախ ուսանողին «դիւրաբէկ» ածականը կու  
տար...:

Երեւանի «Լենինի անուան հանրակացարան»ի Բ. յարկ, 1974, գարուն

Տիգրանը, եթէ յատուկ ժամադրութեամբ մէկուն քով երթար, կը նշանակէր թէ հարցը  
լուրջ է...: Մտաւ ներս, դիմացս նստեցաւ, իբրեւ նախազգուշացման նշան թերթեւ մը  
հազաց ու ըսաւ.

--Նայի՛ր, Մոզըս, Անահիտը եւ ես պէտք է որ ամուսնանանք, սակայն ես չեմ գիտեր  
ինչպէ՞ս կամ ի՞նչ պէտք է ընեմ հիմա...:

Ինծի համար շատ անսպասելի ու տարօրինակ էր հարցը: Առանց մտածելու կատակի  
տուփ ու ըսի.

--Տիգրան ջան, հայրս կ'ըսէր, երբ ձի մը կամ զէնք մը առնես, պէտք է որ լաւ մը փորձես  
եւ ապա որոշես...:

Տիգրանի պատասխանը բարկութենէ աւելի յանդիմանութիւն կը պարունակէր.

--Մոզըս, դուն անկի՛րթ ես: Կը կարծէի որ Մուսալեռոցի աւանդապահ մարդու հետ կը  
խօսիմ, որ խորհուրդ կու տայ ինծի, թէ ինչպէ՞ս, ո՞ւր եւ որմէ՞ Անոյին ձեռքը պիտի  
խնդրեմ... գիւղաքաղաքը՝ իր ծնողներէ՞ն, թէ՞ հորեղբօրմէն, որ հոս՝ Երեւան կ'ապրի:

Տիգրանը, թէեւ նրբանկատ էր եւ խիստ մարդկային, սակայն մեկնելով իր իրաւութենէն,  
չէր վարաներ ճշմարտութիւնը, ի հարկին յանցաւոր մարդոց ուղղակի ճակատին  
ըսելու...:

Նոյն հանրակացարանի նոյն յարկը, 1975, աշուն

Ընկերներով Տիգրանին քով եկած էինք շնորհաւորելու նորածինը, զոր մկրտած էր իր  
հորեղբօր՝ «Հաբաբըրի» պատուին՝ Միհրան: Առաջինը ես արտայատուեցայ.

--Պրակտիկ Տիգրան, մեկ անգամ էն տղայ մը բերի, կը շնորհաւորենք...

--Օ՛ր... Մոզըս, իմ դերս շատ չնչին էր այս գործին մէջ: Պէտք է Անահիտին գնահատել ու շնորհաւորել: Խեղճը ինքն է որ ամիսներ չարչարուեցաւ... յատկապէս ծննդաբերութեան ժամանակ... տառապեցաւ... Լոյսի՛սկ առանց իմ օգնութեան երեխան աշխարհ բերաւ...:

Իմ սրամիտ ընթերցող՝ Տիգրանը այս պարագային չէր սրախօսեր: Մեկ կողմէն կ'ուզէր գնահատել Անահիտի եւ առհասարակ կիներու դերն ու տառապանքը կեանք արարելու գործընթացին մէջ... միւս կողմէն կը փորձէր նաեւ դաստիարակել ինծի պէս «անտաշ» գաւառացիները:

Լոյն տեղը, 1978, ձմեռ:

Միհրանիկը կը մեծնար մեր աչքի առաջ, աշխոյժ, ուշիմ եւ համարձակ երեխայ մըն էր: Մենք՝ ես եւ Մարտիկը (Պոյաճեան) կը խաղայինք հետը եւ ընթացքին կը սորվեցնէինք նաեւ՝ կռուիլ: Շատ չանցած Տիգրանը երեխային ձեռքէն բռնած եկաւ սենեակ: Միհրանիկը, երբ մեզ տեսաւ, նախ փաթթուեցաւ ինծի եւ ապա Մարտիկին անցաւ ու անոր ծունկերուն նստեցաւ: Տիգրանը առանց նախաբանի սկսաւ.

--Տղաք, Միհրանիկը ձեզ շատ կը սիրէ, մենք ալ կը սիրենք, սակայն իրեն կռուիլ սորվեցնելով դուք սխալ կը դաստիարակէք զինք: Անահիտը եւ ես որոշած ենք, որ մեր գաւակը խաղաղութեան մարտիկ պիտի ըլլայ եւ ոչ թէ՛ կռուազան: Շատ կը խնդրեմ, որ ասկէ ետք ո՛չ խաղալիք գէնք բերեք իրեն եւ ոչ ալ կռուիլ սորվեցնէք:



**Միհրանիկ, Տիգրան եւ Մովսես**

Մարտիկը հարցուց.

--Իսկ խաղալիքները ու՞ր են հիմա...

--Պահած եմ ապահով տեղ, հանդերձարանին ետեւը:

Ես զարմացած էի ու զայրացած: Միհրանիկը իսկապես կը սիրէինք այնքան, որ մեր առօրեային մաս կը կազմէր, ու յաճախ կը փնտռէինք անոր ներկայութիւնը: Խնդիրը լրջացուցի եւ խստօրէն ըսի.

--Ի՞նչ է, ըսել կ'ուզես որ Միհրանիկը մեր քով պիտի չգայ այլեւս...

--Ոչ, Մոզըս, սխալ մի հասկնար, երբ կ'ուզէք թող գայ, պայմանաւ որ ասկէ ետք ոչ զէնքի խաղալիք ցոյց տուէք իրեն եւ ոչ ալ կռուիլ սորվեցուցէք: Մենք՝ այդպէս որոշեցինք:

--Չ'ըլլար Տիգրան, դուն եւ Անահիտը ի՞նչ իրաւունք ունիք այդպէս որոշելու...

--Ինչպե՞ս թե, մարդկային իրաւունքներ կան: Մե՛ր գաւակն է եւ մենք մե՛ր ուզածին պէս պիտի դաստիարակենք...չէ՞...

--Միայն ձեր գաւակը չէ, Միհրանիկը Հայ է, կը նշանակէ թէ նախ ազգին կը պատկանի եւ ապա միայն ձեզի...: Հայկոյին ծնողները՝ Արփին եւ Շահէն կը վստահին մեզի, դուք ինչո՞ւ չէք վստահիր...

--Չեմ հակնար, այդ ի՞նչ տեսակ տրամաբանութիւն է, Մոզըս, առաջին անգամն է որ կը լսեմ, չեմ հասկնար, քու ուզածդ ի՞նչ է:

--Նայիր Տիգրան, մեր ազգային պարտականութիւնն է Հայ երեխաները դաստիարակել ու ինքնապաշտպանութիւն սորվեցնել, մենք մարտունակ ու կիրթ պատանիներ կը պատրաստենք, եւ ոչ թէ կռուազան ու վայրագ փողոցային լակոտներ...: Ասոնք տարբեր բաներ են, եղա՞ւ...:

--Ձեզի ո՞վ իրաւունք տուած է ուրիշին երեխաները դաստիարակել... ձեր ուզածին պէս...

--Նախ՝այս տեսակ իրաւունքը չի տրուիր այլ կ'առնուի...: Մենք՝ Մուսալեռցիներս ատիկա վաստակած ենք մեր հազարամեայ փորձառութեամբ: Մենք ալ խաղաղութեան մարտիկներ կը պատրաստենք...: Kung Fu-ն ինքնապաշտպանական մարտարուեստ է եւ ոչ թէ յարձակողական: Եւ նկատի առ որ **խաղաղութիւնը «անկախութեան» նման նուէր չի տրուիր, այլ ուժով կը նուաճուի ու կը պաշտպանուի...:** Հո՛ւս նայիր, չըլլայ որ Միհրանիկին արգիլես մեր քով գալ...

--Ի՞նչ է, կը սպառնա՞ս: Մեր տղան մե՛նք պիտի դաստիարակենք... մեր ուզածին պէս: Դուք իրաւունք չունիք մեր ընտանեկան ներքին գործերուն խառնուելու...

Հակառակ իր մեղմ ու մարդկային բնաւորութեան, Տիգրանը երեխային ձեռքէն բռնեց ու ըսաւ.

--Եկուր տղաս, եկուր, ասոնք Այնճարցի են, խօսք չեն հասկնար...:

Միհրանիկը դժկամութեամբ հետեւեցաւ հօրը...: Քանի մը օր անցաւ ու մենք զրկուած մնացինք այդ աշխոյժ, ուշիմ ու համակրելի երեխայէն. տխուր էինք ու մտահոգ: Մարտիկը ամենայն լրջութեամբ ըսաւ.

--Այսպէս չ'ըլլար, պետք է որ ճար մը գտնենք ու Միհրանիկը ետ բերենք...

--Քեզի բան մը ըսեմ, Հայկոդ դրդէ որ քանի մը հատ փակցնէ իրեն: Միայն հսկէ որ վտանգաւոր բան մը չընէ...

Յաջորդ օրերուն քանի մը անգամ Միհրանիկը լալով գնաց ծնողներուն քով, սակայն ոչ մէկ արձագանք իրենց կողմէ: Երբ Մարտիկը յուսահատութեան նշաններ սկսաւ ցոյց տալ, թելադրեցի որ շարունակէ...

Քանի մը օր ետք, անգամ եւս յատուկ ժամադրութեամբ, Տիգրանը Միհրանիկին ձեռքէն

բռնած, մեր քով բերաւ ու ըսաւ.

--Մոզըս, Միհրանիկը ինքնապաշտպանութեան պետք ունի... այս աշխարհին մէջ:  
Անահիտը եւ ես ձեր խնամքին կը յանձնենք...

--Ինչո՞ւ, ի՞նչ պատահած է ...:

-- Դուն իրաւունք ունիս, ընկերները կը ծեծեն զինք ու ինք չի կրնար դիմադրել անոնց:  
Անահիտը մտահոգ է...:

--Նայիր Տիգրան, եթէ չես վստահիր, դո՛ւն դաստիարակէ...

--Օ՛, Մոզըս... ես պետք է որ ձեզի պէս դաստիարակուած ըլլայի, որպէս զի կարողանայի  
դաստիարակել... տղուս:

--Շատ լաւ: Անահիտին ըսէ որ ասկէ ետք իր տղան ամուր ձեռքերու մէջ է... թող  
չմտահոգուի...

Ի վերջոյ Տիգրանը համոզուեցաւ որ **«խաղաղութիւնը նուէր չի տրուիր այլ ուժով կը  
շահուի ու կը պաշտպանուի...»**: Ընդամենը շաբաթներ ետք Միհրանիկը ընկերացաւ  
Հայկոյին հետ եւ... այս անգամ կռուազան երեխաները սկսան լալով տուն երթալ:



**Իրաւաբան Ճիմմի, Մինաս, Արմէն եւ Տիգրան. 1987, Տիթրոյթ**



Տիթրոյթ, 1979, Ամստ

Տիթրոյթ էի հանդիպելու եւ ուսումնասիրելու համար ամերիկահայ չորս կերպարուեստագետներու (Սարգիս Սարգիսեան, Չուպէլ Խաչատուրեան, Գեղամ Թագեան եւ Նորա Իփէկեան) ստեղծագործական կեանքը: Տիթրանը եւ Անահիտը (յոյ ըլլալով հանդերձ) շաբաթ մը աւելի ինձմով զբաղեցան...: Գեղամ Թագեանէն ետք, Տիթրանը տարաւ եւ ծանօթացուց Նորա Իփէկեանին, որուն ամուսինը՝ Էտմոն Ազատեանը զիս ներկայացուց Պր. Ալեք Մանուկեանին, որուն մասին յատուկ երախտագիտական յուշեր պէտք է որ գրեմ: Ապա Տիթրանը Չ. Խաչատուրեանի եւ Ս.Սարգիսեանի ստեղծագործութիւնները ուսումնասիրելու համար ծանօթացուց զիս Տոք. Կարապետ Պելեանին, որ երաժշտութեամբ ու կերպարուեստով աւելի հետաքրքրուած կը թուէր ըլլալ քան ատամնաբուժութեամբ: Իր տիկնոջ՝ Չապէլի հետ անոնք կրցած էին գոյացնել այնպիսի հաւաքածոյ մը, որ իրենց բնակարանը (ըլլայ որակով թէ քանակով) ժամանակակից արուեստի թանգարանի մը տպաւորութիւնը կը ձգէր...: Արուեստի հանդէպ մասնագիտական մօտեցում ցուցաբերող այս գոյգի մասին եւս հարկաւոր է առանձինն անդրադառնալ:

Իմ համբերատար ընթերցող՝

Ամիսներ ետք, երբ ես արդէն իսկ վերադարձած էի Պէյրուս, այդ թեժ ու խիստ վտանգաւոր օրերուն, նամակ մը ստացայ Տիթրոյթէն: Նորածինի լուսանկար մը կար մէջը, որուն ետեւի կողմը Անահիտի եւ Տիթրանի ստորագրութեամբ գրուած էր «*Արմէն անուկով Նոր Ֆետայի մը ծնաւ Տիթրոյթի մէջ, քու խնամքին կը յանձնենք. եկուր եւ տեր եղիր անոր*»: Չեմ կարծեր որ այս մէկը մեկնաբանութեան կը կարօտի... :

Քառասուն տարի ետք, դարձեալ Տիթրոյթ, 2019, Օգոստոսին

Հոն էինք տիկնոջս՝ Էլոյին հետ, այս անգամ յատուկ գործով: Տիթրանն ու Անահիտը թոյլ չտուին որ հիւրանոց իջեանենք: Մեր հասած երրորդ օրն իսկ կազմակերպեցին ճաշկերոյթ մը ու հրաւիրեցին իմ ծանօթներէս ու ընկերներէս շատեր, ինչպէս. կերպարուեստագետ՝ Գեղամ Թագեանը, գեղանկարիչ՝ Նորա Իփէկեանը, յայտնի մտաւորական ու լրագրող՝ Էտ. Ազատեանը, ժամակակից արուեստի ցուցասրահի տեր եւ հաւաքորդ՝ Տիկ. Չապէլ Պելեանն ու Ճիմի եւ Ժենիա Տէրեանները:

Սեղանի շուրջ բնականաբար յիշեցինք ուսանողական մեր կեանքը ու սկսանք որոշ դրուագներ պատմել իրարու: Երբ Միհրանիկի բաժինը կը պատմէի, յանկարծ ինք հեռաձայնեց Լոս Անճելոսէն. Միհրանն էր (ԱՄՆ-ի Հայկական Համագումարի Արեւմտեան Շրջանի Տնօրէնը): Տիթրանը տեղակացուց անոր որ ես իր մանկութեանը վերաբերող պատմութիւն մը կը պատմեմ: Ուզեց լսել ու լսելէ ետք հարց տուի.

-- Միհրան ջան՝ կը յիշես զիս եւ Մարտիկը, որ «կռիւ- կռիւ» կը խաղայինք հետդ...:

Ան պատասխանեց.

~~Թեև ձեզ կը յիշեմ, սակայն կոխի պարագան շատ յստակ է ինձի համար:~~

--Իսկ հիմա...

--Ես հանդարտաբարոյ եւ խաղաղասեր մարդ եմ, սակայն եթէ պոչիս կոխեն կամ վիրաւորեն զիս, յատկապէս ազգային գետնի վրայ, հարցը կը փոխուի...

Իմ խիզախ ընթերցող՝ չե՞ս կարծեր որ այս մէկն ալ մեկնաբանութեան չի կարօտիր:

1977-ին կայացած հարցազրոյցի մը ընթացքին Տիգրանը կ'ըսէ. *«Ամերիկայում այժմ գոյացել է մեծագոյն Հայ գաղթածախ, որը տառապում է Հայոց լեզուի չիմացութեամբ եւ հայրենաբաղձութեամբ: Իմ եւ հայածին տիկնոջս՝ Անահիտի կոչումը կը լինի հնարաւորին չափով ամոքել հեռաւորութեան ցաւը եւ մերձեցնել Սփիւռքի հայութեան հոգիները Մայր հողի հետ»:*

Այդպէս ալ ըրին ինք եւ Անահիտը:

Տիգրանը մինչեւ մահ հայերէն եւ հայագիտական նիւթեր կը դասաւանդէր Տիթրոյթի Ալեք Մանուկեանի անուան դպրոցէն եւ Ուէյն Համալսարանի Արեւելագիտական բաժնի Հայագիտականի ամպիոնէն ներս: Իսկ Անահիտը՝ մինչեւ օրս կը շարունակէ հայերէն ուսուցանել եւ հայեցի դաստիարակութիւն տալ աշակերտներուն, նոյն դպրոցէն ներս: Անոնց երեխաները՝ Միհրանը, Արմէնն ու Անին կատարեալ հայերէն կը խօսին, կը կարդան ու կը գրեն...:

Իմ արդարամիտ ընթերցող՝ աւարտելէ առաջ չեմ կրնար հոս փակագիծ մը չբանալ, եւ երկու խօսք չըսել նաեւ իմ լաւագոյն ընկերներէն՝ քեսապցի Ճիմիին մասին: Ան ծնած եւ մեծցած էր ԱՄՆ.-ի մէջ: Երբ տակաւին իբրեւ իրաւագիտութեան ուսանող կը յաճախէր Միշեկընի Ուէյն համալսարանը, ընդմիջելով ուսումը Հայաստան եկած էր հայերէն սորվելու... մէկ տարուայ ծրագրով միայն: Հայրենիքէն վերադարձէն ետք, իր նախածեռնութեամբ եւ Ալեք Մանուկեանի նիւթաբարոյական աջակցութեամբ, Ուէյն համալսարանի մէջ ստեղծուեցաւ Հայագիտական ամպիոն: Հետագային ինքնաշխատութեամբ այնքան կատարելագործեց իր մայրենի լեզուն, որ ան շրջան մը հայերէն դասաւանդեց Ուէյն Համալսարանի Գերմանո-Սլաւոնական բաժնի, Հայագիտութեան ամպիոնէն ներս: Անոր երկու երեխաները, Վանը եւ Լորիկը նոյնպէս կատարեալ հայերէն կը խօսին, կը կարդան ու կը գրեն, որուն մէջ մեծ դեր ունի նաեւ իր տիկինը՝ Ժենիան:

Իսկ Տիգրանը, Հակառակ անոր որ ծնած եւ մեծցած էր ԱՄՆ.-ի մէջ, չկրցաւ ըլլալ Ամերիկահայ: Շուրջ տասը տարի ուսանելով ու ապրելով հանդերձ Հայաստանի մէջ, չկրցաւ ըլլալ նաեւ արեւելահայ: Ան սփիւռքահայ ալ չեղաւ, այլ մնաց իր արմատներուն հաւատարիմ, իբրեւ մաքուր Պոլսահայ, որոնց մասին մեր արդարահատոյց հերոսներէն՝ Արշալիր Շիրակեան բառացիօրէն կ'ըսէ. *«Ի պատիւ իրենց... թուրք կառավարութեան գործակից հայանուն մատնիչներուն մէջ մէկ հատիկ պոլսահայ չկար»:*

*(\*) Թուվաճանները բնիկ Կիւրիսցի էին, Սեբաստիայի մարզ (Սվազ)*

*(\*\*) Գիրուկ*

## Comments



**Գեորգ Մարաշլեան** – 2023-02-25 17:28:13

Շատ հաճելի յուշեր հանրութեան յանձնած ես Մովսէս, միեւնոյն ժամանակ  
արժանւոյն պատիւը տուած ես Տիգրանին եւ իր ընտանիքին:  
Շնորհակալութիւն Գեորգ Մարաշլեան